**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/5-1**

ք.Երևան «25» «07» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քոնստրաքշն Գրուպ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հակոբ Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 07.06.2023թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 06.07.2023թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, ՀՀ կառավարության 2022թ.-ի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1107-Ն որոշումը, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N3 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Պայմանագրի 1.3 կետի առաջին պարբերությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ «1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ»:

1.3 Պայմանագրի N2 հավելվածի՝ «օրացուցային գրաֆիկ»-ի, աշխատանքների կատարման ժամկետը սյունակի այն տողերը որոնցում նշված է «180 օր» փոխարինել հետևյալ արտահայտությամբ՝ «մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ»:

1.4 Քանի որ Կապալառու կազմակերպությունը հրաժարվում է Պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված կանխավճարից, ուստի նշված կետը դադարում է գործել:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված է 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Քոնստրաքշն Գրուպ» ՍՊԸ,
Ք. Արտաշատ, Շահումյան փ. 12/21
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220013334580000
ՀՎՀՀ 04235059

Տնօրեն՝
Հ.Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«25» «07» 2023 թ. կնքված N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/5-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 3 | 45611300/507 | ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ի պատժախցերի, պահպանության և դիտաշտարակների վերանորոգման շինարարական աշխատանքներ | - | - | 16.550.000 | 41.517.000 | 41.517.000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Դ/Կ
Կ. Ամիրխանյան

_______________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Քոնստրաքշն Գրուպ» ՍՊԸ,
Ք. Արտաշատ, Շահումյան փ. 12/21
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220013334580000
ՀՎՀՀ 04235059

Տնօրեն՝
Հ.Վարդանյան

_______________________
/ստորագրություն/
Կ.Տ